ՀԱՅՐ ՄԻՔԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

51. ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
(Մարկ. Թ 2—8)

Թ 2 Վեց օր հետո Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լեռան վրա և նրանց առաջ պայծառակերպվեց:
3 Եվ նրա զգեստները փայլուն, խիստ սպիտակ դարձան, այնպես որ երկրի վրա ոչ մի լվացք անող չի կարող այդքան սպիտակեցնել:
4 Եվ նրանց երևաց Եղիան՝ Մովսեսի հետ մեկտեղ, ու նրանք խոսում էին Հիսուսի հետ:
5 Պետրոսը Հիսուսին պատասխանեց և ասաց. «Ռաբբի՛, լավ է, որ մենք այստեղ լինենք և երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի, և մեկը՝ Եղիայի համար»:
6 Սակայն չգիտեր, թե ինչ էր խոսում, որովհետև զարհուրած էին:
7 Եվ մի ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, դրա՛ն լսեցեք»:
8 Եվ հանկարծակի այս ու այն կողմ նայելով՝ այլևս ոչ մի տեղ ոչ ոքի չտեսան, բայց միայն Հիսուսին՝ իրենց հետ:

Մովսեսը լեռ բարձրացավ,
Եվ ամպը ծածկեց լեռն այդ:
Իջավ փառքն Աստուծո
Սինա լեռան վրա,
Եվ ամպն այն ծածկեց վեց օր.
Յոթներորդ օրը ամպի միջից
Տերը կանչեց Մովսեսին:
(Ելից ԻԴ 15—16)

Ելից գրքի այս հատվածը, որտեղ նկարագրված է Մովսեսի և Աստուծո միջև տեղի ունեցած հանդիպումներից մեկը Սինա լեռան վրա, օգնում է մեկ հասկանալու այն ձևը, որով ավետարանիչները ներկայացնում են պայծառակերպությունը: Վեց օրերը, լեռը, Մովսեսը, ամպը, այս բոլորն արդեն կա Ելից գրքի հիշյալ հատվածում: Մարդկային լեզվում չկան բավարար բառեր՝ նկարագրելու համար այնպիսի արտասովոր մի փորձառություն, ինչպիսին ապրում են Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը: Հին աստվածաշնչական ավանդության բառերը դարձյալ մնում են լավագույնները:

Մովսեսը միակ անձը չէ, որ ներկա է Հիսուսի կողքին: Նրանից առաջ հիշատակվում է Եղիան՝ 9-րդ դարի մարգարեն, որի մասին Մարկոսն արդեն խոսել է և որը, ինքը ևս, Սինայի սուրբ լեռան վրա առանձնաշնորհյալ մի հանդիպում էր ունեցել Տիրոջ հետ: Հալածվելով Հեզաբել թագուհու կողմից, որը սպանել էր տալիս մարգարեներին մեկը մյուսի ետևից, նա փախել էր դեպի անապատ և հասել մինչև այն լեռը, որտեղ, երեք դար առաջ, Մովսեսը խոսել էր Աստուծո հետ: Եվ այնտեղ, իր հերթին, նա հանդիպել էր նրան: Տերը, սակայն, ո՛չ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № Բ—Թ-ից:

ամպրոպի, ո՛չ երկրաշարժի և ո՛չ էլ կրակի մեջ էր, այլ՝ մի մեղմ կեփյուռի շնչի մեջ (Ա Թագ. ԺԹ 1—12):

Այսպես, Մովսեսն ու Եղիան այն երկու երևելի անձերն են Սինայի լեռան վրա, որտեղ Աստված հայտնվում է: Մովսեսը՝ օրենսդիրը, ներկայացնում է այն օրենքը, որ Աստված տվեց Իսրայելին: Եղիան ինքը խորհրդանիշն է մարգարեական հոսանքի: Նրանք երկուսով ներկայացնում են «Օրենքը և Մարգարեները», մի արտահայտություն, որով հրեաները նշում են իրենց սուրբ գիրքը, այն, որ քրիստոնյաները կոչում են «Հին կտակարան»: Եղիայի և Մովսեսի հետ խոսող Հիսուսը իրոք Քրիստոսն է, որը լրացնում է սուրբ գրվածքները:

Գալով այն լեռան, որտեղ տեղի է ունենում դեպքը, այնքան էլ կարևոր չէ, թե որտեղ է գտնվում: Սուրբ Երկրի ուխտավորները պայծառակերպության տոնը նշում են Թաբոր լեռան վրա, որը ներդաշնակ ուրվագծերով բոլորակաձև մի գագաթ է Նազարեթին մոտիկ: Մարկոսի աշխարհագրական տվյալը ավելի շուտ մտածել է տալիս Հերմոնի բարձունքներից մեկի մասին, որը շատ ավելի կարևոր մի լեռնաշղթա է Փիլիպպյան Կեսարիայի մոտերքում: Սակայն ավետարանում պայծառակերպության վայրը ամենից առաջ տիպական լեռն է, նոր Սինային, այն բարձրադիր վայրը, որտեղ Աստված հայտնում է իր փառքը: Դեպքը կարող է տեղի ունեցած լինել մի քանի մետր բարձրություն ունեցող մի բլրակի վրա. այստեղ լեռան աստվածաբանական տարողությունն կարևոր է, քան նրա բարձրությունը:

Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը այս բացառիկ հայտնության երեք վկաներն են լինում: Հետագայում, Գեթսեմանի գյուղում, նրանք պիտի լինեն այն անձինք, որոնց Հիսուս իր հետ է տանում աղոթելու, վերջին ժամին, երբ վճռվում են նրա վերահաս չարչարանքները (Մարկ. ԺԴ 32—42): Իսկ ավելի վաղ, նա նրա՛նց էր իր հետ վերցրել ու մտել ննջեցյալ դեռատի աղջկա սենյակը, Հայրոսի տանը, որտեղ նրանք վկա էին եղել աղջկա հարությանը (Մարկ. Ե 21—43):

Տասներկուսի մեջ նրանք այն աշակերտներն են, որոնց Հիսուս ամենից ավելի է վստահում իր կյանքի ամենադժնդակ պահերին: Պետրոսը միակն է այստեղ, որի խոսքերը մեջ են բերված երկնքից լսվող խոսքերի հետ միասին: Ցանկանալով վանել իր սարսափը՝ նա դիմում է Հիսուսին «Ռաբբի», «Տեր իմ» սովորական բառերով, որոնցով հրեա մարդը դիմում է իր մեծավորին: Նա առաջարկում է պատրաստել երեք տաղավարներ, որոնք կարող են հիշեցնել թե՛ ուխտի տապանակը անապատում եբրայեցիների կեցության ժամանակ և թե՛, ընդհակառակը, շատ տվորական մի բնակարան, որը Հիսուսին, Մովսեսին և Եղիային կդներ նվազ տպավորիչ կյանքի պայմանների մեջ: Աշակերտների վախը մի տեսակ սրբական սարսափ է, որ Պետրոսը փորձում է ամեն կերպ մեղմացնել:

Արդ, երկինքը պատասխանում է Պետրոսին՝ առավել ևս վգալի դարձնելով Աստուծո ներկայությունը: Սկզբնապես երկնքում երևացող սպիտակությանը (համար 3) այժմ ավելանում է մի ամպ, որը հիշեցնում է Ելքի օրերին երևացող ամպը և որը ամբողջապես ծածկում է նրանց (համար 7). ապա երկնքից լսվում է մի ձայն, որի խոսքերը հիշեցնում են այն խոսքերը, որ Հիսուս լսել էր իր մկրտության ժամանակ (Մարկ. Ա 9—11): Երեք աշակերտները միանգամից մխրճվում են երկնային աշխարհի սրտում, որտեղ նրանց հայտնվում է Հիսուսի խոր ինքնությունը: Նրա մասին այժմ նրանք գիտեն այնքան շատ բան, որքան այն դները, որոնք նրա անունն էին կանչում ավետարանի սկզբում, հենց որ տեսնում էին նրան (Մարկ. Ա 21—28 և Ե 1—20): Մի վայրկյանի համար նրանք մուտք են գործում խորհրդի աշխարհը:

Ինչո՞ւ այս առանձնաշնորհումը, և ինչո՞ւ հենց այս պահին: Որովհետև Հիսուսի մոտալուտ չարչարանքները անկասկած ահավոր մի փորձություն պիտի լինեն նրանց համար: Ավետարանիչն արդեն ցույց է տվել, թե ինչպես Պետրոսը մերժում է այդ փորձությունը իր ամբողջ ուժով (Մարկ. Ը 31—33): Հետագայում նա ցույց պիտի տա Պետրոսին իր Տիրոջն ուրանալիս (Մարկ. ԺԵ 66—72): Անտարակույս Հիսուսի մահն անխուսափելի է, բայց Աստված լավ գիտի, թե որքա՞ն ծանր պիտի լինի այդ մահը աշակերտների համար: Ուստի նա նրանցից երեքին տալիս է ամենաուժեղ վենքերը՝ հաղթահարելու համար իրենց թուլությունը:

Երկնային ձայնը լռում է հետևյալ բառերն արտասանելուց հետո. «Լսեցե՛ք դրան» (համար 7): Դա նշանակում է. «Այժմ դուք ունեք այն, ինչ հնարավոր է՝ կարողանալ լսելու համար չարչարանքների հայտնությունը. թող դրանք ձեզ չվհատեցնեն, դուք բավականաչափ բան գիտեք նրա մասին, որպեսզի չկորցնեք ձեր հույսը»:

Եվ երբ ավետարանիչը նկարագրում է այս դեպքը իր ընթերցողների համար, այս նույն բանն է ասում նրանց իրենց սեփական մահվան մասին:

52. ՍՈՒՐԲ ԳՐՎԱԾՔԻ ԹԱՔՈՒՆ ՄԵԿ ԵՐԵՍԸ (Մարկ. Թ 9—13)

Թ 9 Եվ մինչ լեռնից իջնում էին, նա պատվիրեց նրանց, որ իրենց տեսածը մարդու չպատմեն, մինչև որ մարդու Որդին մեռելներից հարություն առնի:

10 Նրանք այս խոսքը իրենց մտքում պահում և միմյանց հարցնում էին, թե ի՞նչ է մեռելներից հարություն առնելը:

11 Ապա հարցրին նրան ու ասացին. «Այն ի՞նչ է, որ դպիրները ասում են, թե նախ Եղիան պետք է գա»:

12 Պատասխանեց նրանց և ասաց. «Եղիան նախ պիտի գա և ամեն բան հաստատի. իսկ ինչո՞ւ մարդու Որդու մասին գրված է, որ շատ չարչարանքներ պիտի կրի և անարգվի:

13 Բայց ես ասում եմ ձեզ, որ Եղիան եկավ, և նրան արեցին, ինչ որ կամեցան, ինչպես որ գրված է նրա մասին»:

Ինչպես ամեն անգամ, երբ իր կրրությունը հայտնի է դառնում, այս անգամ էլ Հիսուս, լեռնից իջնելիս, որտեղ տեղի էր ունեցել պայծառակերպությունը, պահանջում է գաղտնապահություն և, ներկա դեպքում, խոստում է ստանում այդ մասին: Եկեղեցին Զատկից հետո միայն տեղյակ պիտի դառնա, թե ինչ է տեղի ունեցել լեռան վրա Հիսուսի ու նրա երեք աշակերտների միջև: Եվ նա այդ եղելության լուրը պիտի փոխանցի Հարության փորձառության լույսի տակ:

Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, սակայն, ամբողջովին խռովվել-շփոթվել են այն ամենից, ինչ կատարվել է Փիլիպպյան Կեսարիայում հայտարարապետի խոստովանությունից ի վեր: Նրանք այնպես են շփոթվել, որ ամեն տեսակ անհեթեթ հարցեր են ուղղում միմյանց մեռելների հարության մասին: Սակայն հարությունը ընդունված մի բան է փարիսեցիների հոսանքի և ապա նաև այդ ժամանակաշրջանի հրեաների մեծամասնության կողմից: Հերովդեսն ինքը հավատում է դրան, նա, որ վախենում էր, թե Հովհաննես Մկրտիչը կարող է վերակենդանացած լինել (Մարկ. Զ 14—16): Ինչպե՞ս աշակերտները կարող են հարց տալ իրար, թե ինչ բան է դա:

Մեսիայի չարչարանքների հայտնությունը, թվում է, խախտել է նրանց ամբողջ վստահությունը: Այն վախն էլ, որ նրանք կգացին լեռան վրա, ոչինչ չփոխեց: Նման հարվածներից հետո այլևս ոչ մի բան անխախտ չի մնա նրանց հոգում: Այնպիսի սքանչելի մի պատմող, ինչպիսին Մարկոսն է, ցայտուն կերպով վեր է հանում այն ավերը, որ աշակերտների սրտում գործում է տարակտանքի և փառքի այդ պայթուցիկ խառնուրդը:

Պետրոսը և նրա երկու ընկերները, ամբողջապես տագնապած, կառչում են այն բանից, ինչ կարծում են, թե գիտեն սուրբ Գրվածքներից: Մի պահ պատկերացնենք նրանց հետևյալ բառերը թոթովելիս. «Բայց չէ՞ որ մեզ ասել են, թե Եղիան վերադառնալու է նախքան վերջնական վերականգնման ժամանակը հասնելը»: Նրանց ուսուցանող դպիրները իհարկե նրանց սովորեցրել են Մաղաքիայի այս պատգամը.

Եվ ահա ուղարկում եմ ես ձեզ
Եղիա մարգարեին,
Քանի դեռ չի եկել
Տիրոջ օրը մեծ և երևելի:

(Մաղաքիա Գ 23)

Բոլորը ծանոթ են Մարկոսի ավետարանի այդ հատվածին (տես Մարկ. Զ 14—16): Հիսուս ընդունում է Եղիայի առաքելության այդ կողմը, բայց նա այն լրացնում է մի բանով, որ մարդիկ հեշտությամբ մոռանում են: Եղիան նոր ժամանակների նախակարապետը լինելուց առաջ հրեա ժողովրդի մեծերի կողմից հալածված մի մարգարե եղավ, և այնիվ մարդիկ թույլ տվեցին, որ նա հալածվի: Սուրբ Գրվածքը այդ էլ է ասում:

Նույն բանը կարող ենք ասել նաև Իսրայելի պատմության մեջ արդար մարդկանց մեծամասնության համար՝ Հին Կտակարանի ո՛ր մասին էլ որ դիմենք: Քսաներկուերորդ Սաղմոսն այդ արտահայտում է սրտաճմլիկ բառերով.

Իսկ ես որդ եմ և ոչ թե մարդ,
Նախատինք մարդկանց և անարգանք ժողովրդյան:
Բոլոր ինձ տեսնողները ծաղրում էին ինձ,
Շրթներով խոսում ու շարժում գլուխներն իրենց:

(Սաղմոս ԻԲ 7—8)

Իսկ Եսայու գրքում նկարագրված է Աստուծո ծառայի ողբերգական վիճակը.

Անարգված և մարդկանց երեսից ընկած,
Հարվածների տեր, ցավերի համբերող եղավ.
Այնպիսի մեկը, որից երես են թեքում.
Անարգված մեկնից և ոչինչ համարված:

(Եսայի ԾԳ 3)

Այսպիսին է սուրբ Գրվածքի անփոփոխ վկայությունը: Եղիան այդ դրությունից չի խուսափել, եթե նույնիսկ չի մեռել ողբերգա-

կան ձևով: Ավելի ուշ, Հովհաննես Մկրտիչն իր հերթին նույնպիսի հալածանքի ենթարկվեց այս աշխարհի մեծերի կողմից: Անկասկած նրա՛ն է ակնարկում տեքստը Հիսուսի բերանով, եթե նույնիսկ չի տրվում նրա անունը. «Եղիան եկավ, և նրան արեցին, ինչ որ կամեցան» (համար 13): Տարբեր չպիտի լինի նաև մարդու Որդու դրությունը:

Շփոթահար երեք աշակերտներին Հիսուս բացահայտել է տալիս սուրբ Գրվածքի թաքուն մեկ երեսը, այն, ինչ բոլոր ժամանակների աշակերտները անընդհատ ուզում են մոռանալ, որովհետև այն համատեղելի չէ Աստուծո մասին իրենց ունեցած գաղափարի հետ և իրենց դեմ է վկայում:

53. ԼՈՒՍՆՈՏ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿՈՒՄԸ (Մարկ. Ը 14—29)

Ը 14 **Եվ աշակերտների մոտ գալով՝ նրանց շուրջը տեսան մեծ բազմություն և դպիրներ, որոնք վիճում էին նրանց հետ:**

15 **Եվ իսկույն ամբողջ ժողովուրդը, երբ տեսավ նրան, զարմացավ և, ընդառաջ վազելով, ողջույն էր տալիս նրան:**

16 **Եվ նա հարցրեց նրան. «Ինչի՞ մասին էիք վիճում նրանց հետ»:**

17 **Ժողովրդի միջից մեկը պատասխանեց և ասաց. «Վարդապե՛տ, քեզ մոտ բերեցի որդուս, որին մի համր չար ոգի բռնել է.**

18 **և ուր հասնում է, նրան գետին է գցում. փրփրում է, ատամներն է կրճտացնում և ապա չորանում մնում է: Քո աշակերտներին ասացի, որ հանեն, բայց չկարողացան հանել այն»:**

19 **Նա պատասխանեց նրանց և ասաց. «Ո՛վ անհավատ ազգ, մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչև ե՞րբ պիտի հանդուրժեմ ձեզ. բերե՛ք նրան ինձ մոտ»:**

20 **Եվ նրան բերեցին իր մոտ: Երբ չար ոգին նրան տեսավ, իսկույն ուժգին ցնցեց տղային, որը, գետին ընկնելով, թավալվում էր ու փրփրում:**

21 **Հիսուս հարցրեց նրա հորը և ասաց. «Ինչքա՞ն ժամանակ է անցել այն օրվանից, ինչ այդ պատահել է նրան»: Եվ նա ասաց. «Մանկությունից:**

22 **Շատ անգամ չար ոգին կրակի և ջրի մեջ է նետում նրան, որ կործանի. արդ, եթե մի կերպ կարող ես, օգնի՛ր մեզ, Տե՛ր, գթալով մեզ»:**

23 **Եվ Հիսուս ասաց նրան. «Ասացիր՝ եթե կարող ես. ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է»:**

24 **Երեխայի հայրը իսկույն աղաղակեց և ասաց. «Հավատում եմ, օգնի՛ր իմ անհավատությանը»:**

25 **Երբ Հիսուս տեսավ, որ ժողովուրդը իրար վրա է հավաքվում, սաստեց պիղծ ոգուն և ասաց. «Դո՛ւ, հա՛մր և չա՛ր ոգի, ես եմ հրամայում քեզ, դո՛ւրս ելիր նրանից և այլևս չմտնես դրա մեջ»:**

26 **Եվ չար ոգին ճչաց, ուժգին ցնցեց նրան և դուրս ելավ. և պատանին մեռելի պես եղավ, այնքան որ շատերը ասացին, թե մեռավ:**

27 **Հիսուս բռնեց նրա ձեռքից, վեր բարձրացրեց նրան, և նա ոտքի կանգնեց:**

28 **Եվ երբ Հիսուս տուն մտավ, աշակերտները, առանձին, հարցրին նրան. «Ինչո՞ւ մենք չկարողացանք հանել դրան»:**

29 **Եվ նա ասաց նրանց. «Այդ տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթե ոչ պահեցողությամբ ու աղոթքով»:**

Ահա դարձյալ մի կենդանի պատմություն Մարկոսի ավետարանից, ոչ այնքան գրական, որտեղ բանավոր ավանդությունը համարյա նույն մակարդակի վրա է, ինչ որ գրվածքը: Պատմությունը թեև վատ է կառուցված, բայց լի է կենտրոնակությամբ: Հիսուսի և երեխայի հոր միջև տեղի ունեցող երկխոսությունը այն ժամանակ, երբ փոքրիկը ծանր տագնապի մեջ է գտնվում (համար 21—24), անշուշտ անպատեհ է, բայց միաժամանակ բոլորովին ճշմարտանման: Գրվածքը, այնպես, ինչպես շարադրված է, տպավորում է իր որակով և համարյա մեկնաբանություն չի պահանջում: Այստեղ հանդերձ կարող ենք ընդգծել որոշ երևույթներ՝ մեր հայացքը կենտրոնացնելով տարբեր դերակատարների վրա:

Վերջին անգամ երբ Մարկոսը խոսում էր **ամբոխի** մասին, Հիսուս գտնվում էր հեթանոսական երկրում (Մարկ. Ը 34-ից Թ 1): Նա մի ճառ էր ուղղել ժողովրդին կյանքը կորցնելու անհրաժեշտության մասին, որպեսզի կարելի լիներ այն փրկել: Սակայն այստեղ ներկա են դպիրներ, ինչ որ ենթադրել է տալիս, որ նրանք վերադարձել են Հրեաստան: Ամբոխի զարմանքը Հիսուսի վերադարձը տեսնելիս՝ հասկանալի է լինում միայն այս կոնտեքստում: Հիսուս մեկնեց հացերի առաջին բազմացումից քիչ անց (Մարկ. Զ 35—44)՝ մերժելով ուրիշ ամեն նշան (Մարկ. Ը 10—13): Երբ մարդիկ նորից են տեսնում նրան, ապշում են, ինչպես դա լինում է, երբ մարդ գտնվում է անսպասելի մի վերադարձի առջև: Ընդունելությունը լինում է ավելի քան ջերմ:

Հիվանդը բռնվել է մի համր չար ոգուց: Մարկոսի նկարագրած ախտանշանները ժամանակակից ընթերցողին թույլ են տալիս

նշել նրա հիվանդությունը, որը լուսնոտություն է: Դևի համր լինելը, սակայն, պատճառ է դառնում, որ նա չխոսի: Հիսուսի դիմաց կանգնած՝ նա ոչինչ չի բացահայտում հակառակորդի ինքնության մասին, մինչդեռ մյուս պիղծ ոգիները այդ բանն անում էին (տես Մարկ. Ա 21—28, Ա 32—34 կամ Ե 1—20): Սա բավարարվում է՝ արտահայտելով իր անհանգստությունը և միաժամանակ հաղորդելով իր սաստիկ խռովքը այն մարմնին, որի մեջ ինքը բնակվում է (համար 20):

Երեխայի հայրը մի խեղճ մարդ է: Նրա դեմքից պոռթկում է անձկությունը: Նրա խնդրանքը բախվել էր աշակերտների անկարողությանը: Նա շատ վստահ չէ նաև Տիրոջ կարողություններին: «Եթե մի կերպ կարող ես...», ասում է նա Հիսուսին վստահության և կասկածի խառնուրդ հանդիսացող մի արտահայտությամբ (համար 22): Վերջին բառերն էլ, որ աղաղակով դուրս են գալիս նրա բերանից, արտահայտում են հավատի և թերահավատության նույն հակադրությունը (համար 24): Ճանաչելով իր սահմանները և օգնություն հայցելով՝ նա ցույց է տալիս այստեղ ճշմարիտ աշակերտի վերաբերմունք:

«Պաշտոնական» աշակերտները, ընդհակառակը, ինչքան ավելի էին վստահել իրենց սեփական ուժերին, այնքան հուսախաբ ու ձեռնթափ էին եղել, թեև նախապես իշխանություն էին ստացել պիղծ ոգիների վրա (Մարկ. Զ 7—13): Սակայն համր դևերը, թվում է, ավելի ուժեղ դիմադրականություն ունեն, քան մյուսները (համար 29): Շատախոս մի դևի գոռում-գոչումներին կարելի է հակադրել խոսքի կորությունը, բայց երբ սատանան լռում է, Աստուծո հետ սրտից սիրտ հաղորդված լուռ աղոթքը միայն կարող է դառնալ ապդու մի վենք: Համր դևը միաժամանակ խուլ է (համար 25): Նրա վրա ուղղակի որևէ ազդեցություն ունենալ հնարավոր չէ: Սատանան երբեք այնքան վտանգավոր չէ, որքան երբ վերապահ է լինում. և նրա արարքն էլ դառնում է շատ ավելի ծածուկ:

Գալով Հիսուսին, բացի չարի վրա նրա ունեցած իշխանությունից և երեխայի հոր կրած տառապանքների նկատմամբ նրա ցուցաբերած ուշադիր մոտեցումից, գլխավորապես նրա հոգնությունն է, որ զգացվում է այս հատվածում: Հայտնի չէ, թե ներկա սերնդի անհավատության մասին նրա արած խիստ դիտողությունը ում է ուղղված՝ ամբոխի՞ն, դպիրների՞ն, թե՞ աշակերտներին, բայց այն արտահայտում է մի տեսակ հիասթափություն և հոգնություն: Հավատի դաստիարակությունը, որին նա ձեռնամուխ է եղել սկզբից ի վեր, հաստատապես արդյունք չի տալիս: Մինչև վերջ նա պիտի մնա մենակ, և հետզհետե ավելի մենակ:

54. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Մարկ. Թ 30—32)

Թ 30 Այնտեղից ելնելով՝ նրանք անցնում էին Գալիլիայի միջով, և Հիսուս չէր կամենում, որ որևէ մեկն իմանա,

31 քանի որ իր աշակերտներին ուսուցանում էր և նրանց ասում. «Մարդու Որդին մատնվելու է մարդկանց ձեռքը, նրանք պիտի սպանեն նրան. և երբ նա սպանվի, երրորդ օրը հարություն պիտի առնի»:

32 Բայց նրանք չէին հասկանում այդ խոսքը և վախենում էին հարցնել նրան:

Այժմ Հիսուս տեղափոխվում է Գալիլիա առավելագույն գաղտնապահությամբ: Նա աներկյուղ հանձն է առնում գնալ չարչարանքների ճանապարհով: Նա այլևս ոչինչ չունի ասելու իսրայելացի ժողովրդին, որը նշաններով ու խոսքով ստացավ այն, ինչ ստանալու էր: Ժողովրդական ամեն ցույց կարող էր նպաստել դեպի ետ մի վերադարձի, իսկ Հիսուս ցանկանում էր անարգել ընթանալ դեպի խաչը:

Նա երկրորդ անգամ իր աշակերտներին հայտնում է իր մոտալուտ մահվան և նրան հաջորդող հարության մասին: Նրա գործածած բառերը շատ մոտ են այն բառերին, որ նա արդեն օգտագործել է առաջին հայտնության ժամանակ (Մարկ. Ը 31—33): Տեղի է ունենալու նաև մի երրորդ հայտնություն (Մարկ. ժ 32—34): Կրկնության այս երևույթը ցույց է տալիս հաստատ ու վճռական մի կեցվածք և շեշտում է դեպի Երուսաղեմ կատարվելիք ճանապարհորդության տարբեր հանգրվանները:

Սակայն աշակերտները այդպես էլ միշտ անհաղորդ են մնում իրենց ուղղված այս խոսքերին: Նրանք չեն կարողանում հաղթահարել իրենց հոգիները համակող անորոշ վախի զգացումը, եթե նույնիսկ իրենց տիրոջ հարությունը երևում է հորիզոնում: Նրանք վախենում են հարց ուղղել Հիսուսին՝ մի բան իմանալու համար այդ մասին: Նրանց վերաբերմունքը հիշեցնում է այն, ինչ ժողովրդական արտահայտությամբ կոչվում է «ջայլամի քաղաքա'լանություն»*:

Միշտ էլ դժվար է աներկյուղ նայել վտանգին, եթե նույնիսկ անկարելի է չդիմագրավել այն:

* «Ջայլամի քաղաքականություն վարել» նշանակում է հրաժարվել վտանգը տեսնելուց:

55. ԼԻՆԵԼ ՍՊԱՍԱՎՈՐ (Մարկ. Թ 33—37)

Թ 33 Եկավ Կափառնայում և, երբ տուն մտավ, աշակերտներին հարցրեց. «Ճանապարհին իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում»:

34 Նրանք լուռ էին մնում, որովհետև ճանապարհին իրար հետ վիճել էին, թե ո՛վ է մեծը:

35 Եվ երբ նստեց, կանչեց Տասներկուսին ու նրանց ասաց. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի»:

36 Եվ մի մանուկ վերցնելով՝ կանգնեցրեց նրանց մեջ և նրան իր գիրկն առնելով՝ նրանց ասաց.

37 «Ով մի անգամ այսպիսի մանուկներից մեկին ընդունում է իմ անունով, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ոչ թե ինձ է ընդունում, այլ նրան, ով ինձ ուղարկեց»:

Իր չարչարանքների և հարության մասին Հիսուսի արած հայտնություններին նրա աշակերտները միշտ հակադրում են այնքան վատ, ինչքան հնարավոր է: Առաջին հայտնությունից հետո Պետրոսն էր, որ միջամըտել էր՝ տարհամոզելու համար Հիսուսին, որ ետ կանգնի այդպիսի դժվարին մի ճանապարհից: Այժմ էլ, ետ դեպի Կափառնայում տանող ճամփին, բավականին երկար թվացող բացակայությունից հետո, աշակերտների փոքրաթիվ խումբը վիճում է առաջնության մասին: Նրանց մտահոգությունը ծիծաղելի է և նույնիսկ բոլորովին անպատշաճ. իրենց տերը պիտի ստորացվի, իսկ իրենք մտածում են միայն մեծարանքների մասին: Առաջադրելով այս հատվածը նախորդի հետ՝ Մարկոսը շեշտում է աշակերտների բացարձակ անհասկացողությունը:

Ավելին, աշակերտները իրենք իսկ զգում են իրենց հավակնոտությունը: Երբ Հիսուս հարցնում է նրանց, թե ի՞նչ է իրենց վեճի նյութը, նրանցից ոչ մեկը չի համարձակվում պատասխանել: Այն ժամանակ Հիսուս նստում է, կանչում Տասներկուսին իր մոտ և սկսում է քարոզել նրանց: Այս փոքրիկ տեսարանը ընդգծում է հանդիսավորությունը համայնքային այն ճառի, որ նա պիտի խոսի այն մասին, թե ինչպիսի վարվելակերպ պետք է ունենա ճշմարիտ աշակերտը:

Ճշմարիտ աշակերտը կամովին գրավում է վերջին տեղը (համար 35): Դրանում են կայանում նրա ավնվության միակ նշանները: Այդպես վարվելով՝ նա սոսկ ընդօրինակում է իր տիրոջը, նրան, ով ընտրել է նվաստացուցիչ մահվան ճանապարհը:

Ճշմարիտ աշակերտը վարվում է ինչպես սպասավոր և ոչ ինչպես ղեկավար: Եվ Հիսուս, խոսքը գործին միացնելով, ցույց է տալիս իր սերը մի մանկիկի նկատմամբ, որի տարիքը մարդկանց աչքին արհամարհելի է դարձնում նրան: Հնադարում երեխաների նկատմամբ բնավ չի եղել այն հոգատարությունը, որ նրանց հանդեպ ցույց է տալիս արդի հասարակությունը: Դեռևս կուրկ լինելով խոսելու և մտածելու կարողությունից՝ նրանք համարվել են անարժեք, աննշան էակներ:

Մարկոսի ավետարանում Հիսուս երկու անգամ երեխաների հանդեպ ցույց է տալիս մասնավոր մի հետաքրքրություն, որ բոլորովին անսովոր է թվացել իր ժամանակիցների աչքին: Երկրորդ անգամ (Մարկ. Ժ 13—16) նա երեխաներին որպես օրինակ է բերում՝ հայտնելու համար, որ նրանք ավելի լավ են ընդունում Աստուծո թագավորությունը, քան մեծահասակները: Այս անգամ, սակայն, նրա մտադրությունը բավականին տարբեր է. նա ոչ թե երեխաներին է առաջարկում որպես օրինակ, այլ իր սեփական վերաբերմունքն է, որ թելադրում է ընդօրինակել:

Արդարև, ընդունելով մի մանկիկի, Հիսուս խորհրդանշականորեն այն միտքն է արտահայտում, որ իր անձը դնում է ի ծառայություն բոլոր մարդկանց, նույնիսկ ամենափոքրերի: Նրա աշակերտները հրավիրվում են հետևելու իր օրինակին: Ծառայելով փոքրերին և տկարներին՝ նրանք իրապես կընդունեն Քրիստոսին. և եթե ընդունեն Քրիստոսին, Աստված ինքն է, որ եկած կլինի իրենց մոտ:

Մարկոսի այս հատվածը կազմում է ներկայացումների մի տեսակ շղթա. մարդկանց մեջ ամենախեղճը և ամենաարհամարհելին ներկայացնում է Քրիստոսին, իսկ Քրիստոսը ներկայացնում է Հորը: Բարյացակամություն և սեր ցուցաբերելով մեր եղբայրների նկատմամբ, Քրիստոսի միջոցով, մենք հանդիպում ենք Աստծուն:

56. ԳՈՐԾԵԼ ՀԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ (Մարկ. Թ 38—42)

Թ 38 Հովհաննեսը պատասխանեց և ասաց. «Վարդապե՛տ, տեսանք մեկին, որը քո անունով դևեր էր հանում, բայց մեր ետևից չէր գալիս, և արգելեցինք նրան»:

39 Եվ Հիսուս ասաց. «Արգելք մի՛ եղեք նրան, որովհետև չկա մեկը, որ իմ անունով զորավոր գործեր անի ու կարողանա ինձ հայհոյել.

40 **քանզի ով մեզ հակառակ չէ, նա մեր կողմն է:**
41 **Եվ ով որ ձեզ մի բաժակ ջուր խմեցնի հանուն այն բանի, որ դուք Քրիստոսինն եք, ճշմարիտ եմ ասում ձեզ, իր վարձը չպիտի կորցնի:**
42 **Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար ավելի լավ կլիներ, եթե նրա պարանոցից կախված լիներ էշի մի երկանաքար, և ծով նետվեր»:**

Հստակ չէ, թե ինչպես այս հատվածը կապվում է նախորդի հետ: Հիսուս շարունակո՞ւմ է դեռ նստած մնալ և ուսուցանել իր աշակերտներին՝ հրավիրելով նրանց, որ իրենց անձը դնեն ի ծառայություն ամենաանշան մարդկանց (Մարկ. Թ 33—37): Թե՞ Հիսուսի միջամտությունը պարզապես հետագայում է տեղի ունենում: Երկուսն էլ հնարավոր են: Թվում է, թե Մարկոսը մեկը մյուսի ետևից վերախմբավորում է Հիսուսի ասած խոսքերը, որոնք սկզբնապես որևէ կապ չունեն իրար միջև՝ դրանցից յուրաքանչյուրը մոտեցված լինելով նախորդին պարզ այն պատճառով, որ այդ խոսքերի մեջ գոյություն ունի մի ընդհանուր հատկանշական բառ:

Հենց սա է, որ կոչվում է «ճարմանդ-բառեր»-ի կամ «կեռ-բառեր»-ի տեխնիկա: Այս ձևով իրար համապատասխանող բառերի կցումով կարող են կազմվել խոսքերի շարքեր: Այսպես, նախորդ հատվածում կար հետևյալ նախադասությունը. «Ով մի անգամ այսպիսի մանուկներից մեկին ընդունում է **իմ անունով**, ինձ է ընդունում» (Մարկ. Թ 37): Արդ, Հովհաննեսի կողմից տրված հարցը և Հիսուսի պատասխանը իրար կապված են նույնպես Քրիստոսի **անունով:**

— «դևեր հանել **քո անունով**» (համար 38).

— «զորավոր գործեր անել **իմ անունով**» (համար 39).

— «մի բաժակ ջուր խմեցնել **հանուն** այն բանի (այն բանի **անունով**), որ դուք Քրիստոսինն եք» (համար 41):

Այսպես, խոսքերի վերախմբավորումով կազմվում է մի ճառ: Այդ խոսքերը իրար միացնող կապը ոչ այնքան շոշափված նյութն է, որքան օգտագործված բառերը: Հիսուսի կողմից արտասանված նախադասությունները ուղղված են աշակերտներին: Դրանք կազմում են Եկեղեցուն վերաբերող հանձնարարությունների մի ժողովածու, որն ավարտվում է աղի մասին առածներով (Մարկ. Թ 50):

Փաստորեն, դիմելով հանդերձ աշակերտներին և նրանց միջոցով (սկսած Պետրոսի խոստովանությունից) բոլոր նրանց, ովքեր Քրիստոսի անունն են տալիս (Մարկ. Ը 27—30), Հիսուս այստեղ գերազանցապես խոսում է ուրիշների մասին, ամեն մարդու մասին, որին Հովհաննեսի նման առաքյալը ձգտում է դուրս թողնել, որովհետև նա «մեր ետևից չէր գալիս» (համար 38):

Տրված հանձնարարությունները շատ հստակ են. կարիք չկա մաս կազմելու Հիսուսի ուսմունքին տեղյակ քաջավարժ մարդկանց խմբին՝ Քրիստոսին պատկանելու համար: Մեկը, որ պայքարում է չարի դեմ Ավետարանի ոգով, չի կարող թշնամի լինել. «Ով մեզ հակառակ չէ, նա մեր կողմն է» (համար 40):

Այս բառերը առանձնահատուկ նշանակություն են ստանում, երբ ի նկատի ունենանք, որ Մարկոսը դրանք գրի է առել հալածանքների ենթարկված Հռոմի Եկեղեցու համար: Անհրաժեշտ հովանավորությունները կարող են ծնունդ տալ նահանջի, և ավետարանիչը հենց դրա դեմ է պայքարում: Եկեղեցին ակումբ չէ:

Հատվածի վերջում հիշատակվում են այլական վերաբերմունքներ, որոնք կարող են ի հայտ գալ այն մարդկանց նկատմամբ, ովքեր պատկանում են Քրիստոսին: Այդպիսիներին ոչինչ մի բան տալ, թեկուզ մի բաժակ ջուր՝ խմելու, նշանակում է կատարել մի գործ, որ գիտակցաբար թե անգիտակցաբար, մարդուն մոտեցնում է Աստուծո Թագավորությանը: Այստեղ ակամա մտածում ես Մաթևոս ավետարանչի կողմից գծված վերջին դատաստանի մեծդի պատկերի մասին.

Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ...
Ծարավ էի, և ինձ ջուր տվիք՝ խմելու:
(Մաթևոս ԻԵ 34—35)

Դրան հակառակ, ով պատճառ է դառնում մի հավատացյալի անկման, ինչքան էլ փոքր լինի նա, հենց իրեն՝ Քրիստոսին է մերժում և դրանով էլ դատապարտում ինքն իրեն (համար 42): Եվ դա վերաբերում է որքան որսի մարդկանց վարմունքին՝ աշակերտների նկատմամբ, նույնքան և աշակերտների վերաբերմունքին՝ միմյանց միջև.

Ծարավ էի, և ինձ ջուր չտվիք՝ խմելու:
(Մաթևոս, ԻԵ 42)

57. ԿԱՏԱՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Մարկ. Թ 43—49)

Թ 43 **«Եթե քեզ գայթակղեցնում է քո ձեռքը, կտրիր, դե՛ն գցիր քեզնից, որովհետև քեզ համար ավելի լավ է խեղված մտնել հավիտենական կյանքը, քան թե երկու**

ձեռք ունենալ ու գնալ գեհեն, անշեջ կրակի մեջ:

45 **Եվ եթե քո ոտքն է գայթակղեցնում քեզ, կտրի՛ր, քեզնից դե՛ն գցիր այն. լավ է, որ դու կաղ մտնես հավիտենական կյանքը, քան թե երկու ոտք ունենաս ու գեհեն ընկնես:**

47 **Եվ եթե քո աչքն է գայթակղեցնում քեզ, քաշիր—հանի՛ր այն. լավ է, որ դու մեկ աչքով մտնես Աստուծո արքայությունը, քան թե երկու աչք ունենաս ու ընկնես գեհեն,**

48 **ուր նրանց որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում.**

49 **որովհետև ամեն մարդ կրակով պիտի աղվի»:**

Աշակերտներին ուղղված Հիսուսի ճառը շարունակվում է. նախադասությունները միշտ միմյանց շղթայվում են «ճարմանդ-բառեր»-ի եղանակով (տես Մարկ. Թ 38—42): Նախորդ հատվածում օգտագործվել էր **գայթակղեցնել** բառը, որը երեք անգամ կրկնվում է այս հատվածում.

— «Ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին **գայթակղեցնի...**» (համար 42).

— «Եթե քեզ **գայթակղեցնում** է քո ձեռքը...» (համար 43).

— «Եթե քո ոտքն է **գայթակղեցնում** քեզ...» (համար 45).

— «Եթե քո աչքն է **գայթակղեցնում** քեզ...» (համար 47).

Կրակ բառը նույնպես կրկնվել է մի քանի անգամ. այն խորհրդանշում է գեհենը և, բացի այդ, վերջին նախադասությունը կապում է մյուսներին.

— «Գնալ գեհեն, անշեջ **կրակի** մեջ» (համար 43).

— «Ուր... **կրակը** չի հանգչում» (համար 48).

— «Ամեն մարդ **կրակով** պիտի աղվի» (համար 49):

Գործածված բառերը խիստ են, և դրանցով կազմված ճառն ունի զգուշացման երանգ:

Այստեղ հիշատակվել են մարդկային մարմնի երեք անդամներ կամ օրգաններ, որոնք կարող են պատճառ դառնալ աշակերտի անկման՝ ձեռքը, ոտքը, աչքը: Ինչո՞ւ այս երեքը: Անկասկած դրանք խորհրդանշական իմաստ ունեն այն տեսակետից, որ մարդ գլխավորապես դրանց միջոցով է մեղանչում. գողություն, բռնություն, վատ ցանկություն: Մարկոսն արդեն տվել է չար գործերի մի ամբողջ շարք, որոնք մարդուն դարձնում են անմաքուր և որոնք կարող են ավելի կամ նվազ չափով կապվել մարմնի այդ անդամներից մեկն ու մեկի հետ.

Շնություն, պոռնկություն, գողություն, սպանություն, ագահություն, չարություն, նենգություն, գիշություն, չար նախանձ, հայհոյանք, ամբարտավանություն, անզգամություն: (Մարկ. Է 21—22):

Բացի այդ, ձեռքը, աչքը և ոտքը այն առանձնահատկությունն ունեն, որ կույգ են, և մարդ կարող է դրանցից մեկը կորցնել առանց լրիվ հաշմանդամ դառնալու: Դրանց թվարկումը մեկը մյուսի ետևից՝ առաջացնում է մի տեսակ կուտակումի հռետորական ազդեցություն, որ ընդունակ է գրավելու ունկնդրի ուշադրությունը:

Չափազանցությունը, արդարև, բացակա չէ պարադոքսային ձևակերպում ունեցող այս առածներից: Եկեղեցին դրանք բառացիորեն չի մեկնաբանել բնավ: Լեզուն պատկերավոր է, տեղ-տեղ կան հակադրություններ: Գեհենը, որը խորունկ և ոչ այնքան գրավիչ մի ձոր է Երուսաղեմից դեպի ներքև, որտեղ աղբ էին վառում և որտեղից շատ հավանաբար գարշելի հոտ էր դուրս գալիս, հակադրվել է կյանքին (համար 43 և 45) կամ Աստուծո Թագավորությանը (համար 47): Պետք է ամեն գնով խույս տալ դրանից, որովհետև դա ամբողջական կործանման վայր է, թեկուզ ի գին հաշմության, որով մարդ հրաժարվում է իր մարմնի վատ մասից:

Դրան հակառակ, կյանքը և Աստուծո Թագավորությունը (այս երկու բառերը այստեղ թվում են համարժեք) այն խաղագումարն են, որի համար արժե զոհել իր ամբողջ ուժն ու եռանդը: Ամեն ինչ, որ մարդուն հեռացնում է դրանցից, վատ է: Ուստի արժե, որ այդ երկուսը դառնան դրական ընտրության առարկա, եթե նույնիսկ դրա համար մարդ ստիպված լինի, ինչպես ժողովուրդն է ասում, «կորցնել մի քանի փետուր»:

Կյանքը տխուր չէ, բայց լուրջ բան է: Պետք է այն ընդունենք որպես այդպիսին, որպեսզի, ինչպես Աստված ինքն է կամենում, այն հասցնենք հաջող վախճանի: Եվ այդ վախճանը անհունորեն ցանկալի է:

Այս հատվածի վերջին նախադասությունը՝ «ամեն մարդ կրակով պիտի աղվի» (համար 49), դժվար մեկնաբանելի մի նախադասություն է: Կրակը այրում և մաքրում է: Աստվածաշնչում դա դատաստանի ընթացիկ պատկեր է: Գալով աղին՝ համ տալու իր հատկությամբ այն կարող է արտահայտել նկարագիր ունեցող մի կյանքի համը: Այն պահպանում է նաև կերակուրները և հետևաբար կարող է դառնալ ոչ-կրոնական կյանքի խորհրդանիշ: Հայտնի է նաև կրակի վրա աղ ցանելու պաղեստինյան սովո-

ությունը՝ կրակն արծարծելու նպատակով:

Դժվար է ասել, թե ինչպես են կուգակցվում այստեղ կրակի և աղի խորհրդանշական իմաստները: Այն իմաստը, որը թվում է, թե ամենից ավելի է ներդաշնակվում նախորդ նախադասությունների հետ, հետևյալն է. ոչ ոք չի կարող խուսափել իր մեջ եղած կրակի որոշ ներգործությունից, լինի դա կորստյան վայրում ոչնչացնելու համար, լինի մաքրվելով իր անձը պահպանելու համար, ինչ որ Հիսուս արտահայտել է հենց նախորդ նախադասությունների մեջ՝ խոսելով անհրաժեշտ վիրահատությունների մասին:

Մարդ երբեք չի կարող ամբողջովին խուսափել կրակի ներգործությունից. նա նաև պետք է միշտ անցնի մահվան կամ անձնուրացության որոշ մի ձևից: Բայց կան մահեր, որոնք ելք չունեն, իսկ մահեր էլ կան, որ անհրաժեշտ ճանապարհն են ճըշմարիտ կյանքի:

58. ԻՐ ՄԵՋ ՈՒՆԵՆԱԼ ԱՂԸ
(Մարկ. Թ 50)

Թ 50 «Աղը լավ բան է. բայց եթե աղը անմահանա, ինչո՞վ պիտի համեմվի. արդ, դուք ձեր մե՛ջ ունեցեք աղը և իրար հետ խաղաղ եղեք»:

Մարկոսը Հիսուսի բերանով ասված համայնքային այս ճառը եկրափակում է աղի մասին մի քանի նախադասություններով: Այդ նախադասությունները նրան թելադրված են (միշտ շնորհիվ «ճարմանդ-բառեր»-ի եղանակի) այն ասույթով, որով ավարտվում է նախորդ հատվածը. «Ամեն մարդ կրակով պիտի **աղվի»** (Մարկ. Թ 49):

Այժմ աղը հարգի մի բան է համարվում մանավանդ նրա համար, որ համ է տալիս կյանքին: Աշակերտները պետք է աղ ունենան իրենց մեջ, այսինքն՝ պետք է խուսափեն ամեն անմահությունից կամ ամեն գաղջությունից:

Դրա համար էլ նրանք հեռու պետք է մնան սիստեմատիկ բախումներից, որոնց հետ Եկեղեցին գործ չունի բնավ: Աղը ոչ մի կապ չունի տաք խոսակցությունների կամ վեճերի «փշերի» հետ: Մարկոսը, ընդհակառակը, աղը կուգակցում է եղբայրական խաղաղությանը, ինչպես Պողոս առաքյալը, որը հետևյալն էր գրում նրանից մի քանի տարի առաջ.

Ձեր խոսքը թող լինի միշտ լի Տիրոջ շնորհով, ինչպես աղով համեմված, որպեսզի դուք իմանաք, թե ինչպես պետք է պատասխան տաք յուրաքանչյուրին: (Կողոս. Դ 6):

59. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ
(Մարկ. Ժ 1—12)

Ժ 1 Հիսուս այնտեղից վեր կացավ, եկավ Հրեաստանի սահմանները, Հորդանանի մյուս կողմը. և ժողովուրդը դարձյալ գնում-խոնվում էր նրա մոտ. և նա, ինչպես սովոր էր, նորից ուսուցանում էր նրանց:

2 Իսկ փարիսեցիները մոտեցան և նրան փորձելով հարց տվին ու ասացին. «Նե-ռելի՞ է, որ մարդ իր կնոջը թողնի»:

3 Նա պատասխան տվեց նրանց և ասաց. «Մովսեսը ձեզ ի՞նչ պատվիրեց»:

4 Եվ նրանք ասացին. «Մովսեսը թույլ տվեց բաժանվելու թուղթ գրել և արձակել»:

5 Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «Ձեր խստասրտության պատճառով գրեց այդ պատվիրանը ձեզ համար.

6 Մինչդեռ արարչագործության սկզբից Աստված արու և էգ ստեղծեց նրանց»:

7 Եվ ասաց. «Դրա համար աղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և պիտի գնա իր կնոջ ետևից:

8 Եվ երկուսը մի մարմին պիտի լինեն. և այլևս երկու չեն, այլ՝ մեկ մարմին:

9 Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»:

10 Եվ աշակերտները տան մեջ դարձյալ նույնը հարցրին նրան:

11 Եվ նա ասաց նրանց. «Եթե մի մարդ արձակի իր կնոջը և ուրիշին առնի, շնություն արած կլինի:

12 Եվ մի կին եթե թողնի իր ամուսնուն և ուրիշ մարդու կին լինի, շնություն արած կլինի»:

Կափառնայումում իր խոսած ճառից հետո Հիսուս վերջնականապես հեռանում է Գալիլիայից: Նա այլևս չի վերադառնալու այնտեղ: Նա իջնում է դեպի հարավ՝ կտրելանցնելով կանալան շրջաններ. Հուդայի երկիրը, որը հրեաներով բնակեցված մի գավառ է Երուսաղեմի շուրջը, ինչպես նաև Բերիան՝ հեթանոսական մի շրջան Հորդանան գետի արևելյան ափին: Նա ուսուցանում է թե՛ մեկ և թե՛ մյուս շրջանում: Երբ հարցը ուղղակիորեն կապված է նրա առաքելությանը, նրա վերաբերմունքը հեթանոսների նկատմամբ զգալի տարբերություն չունի հրեաների հանդեպ նրա ունեցած վերաբերմունքից:

Ամուսնալուծության մասին հարուցված վեճը, որ Մարկոսը հիշատակում է այստեղ, անտարակույս տեղի է ունենում Իսրայելի երկրում, ինչպես այդ հաստատում է փարիսեցիների ներկայությունն այնտեղ: Սը-

ռանք դժվար մի հարց են տալիս Հիսուսին՝ «փորձելու համար նրան» (համար 2): Սրանք էլ նույն դիտավորությունն ունեն, ինչ որ այն փարիսեցիները, որոնք Դաղմանունիայի շրջանում երկնքից մի նշան էին խնդրել նրանից (Մարկ. Ը 10—13):

Արդարև, Հիսուսին ստիպում են կողմնորոշվել մի հարցի մասին, որը շատ էր ծեծվում մեր թվագրության առաջին դարում: Ամուսնալուծության մասին այն ժամանակ, ընդհանուր առմամբ, կային երկու դիրքավորումներ. մեկը հռչակավոր փարիսեցի Ռաբբի Հիլլելի դիրքավորումն էր. սա ավելի ազատամիտ էր և ամուսնալուծությունը թույլատրում էր բավականին շատ դեպքերում: Դրան հակառակ, մի ուրիշ փարիսեցի մեծավոր՝ Ռաբբի Շամմայը, ամուսնալուծության հարցում ուներ ավելի խիստ մոտեցում. սա կանանց իրավունքները առավելագույնս պաշտպանելու մտահոգությամբ առաջնորդված՝ կնոջ արձակումը ընդունելի էր համարում միայն որոշակի պատճառներով, որոնք թվով շատ ավելի սահմանափակ էին: Ստիպել Հիսուսին, որ արտահայտվի այդ մասին, նշանակում էր կարողանալ, ըստ նրա պատասխանի, ամբաստանել նրան լինի հաշտվողականության, լինի խստակրոնության մեջ և ամեն կերպ հեղինակազրկել նրա ուսմունքը: Փարիսեցիների այդ հարցը մի ծուղակ էր:

Հիսուս չի խաբվում սակայն: Նա տրված հարցը ետ իրենց վերադարձնում է՝ այն դնելով **պատվիրանի** մակարդակի վրա. «Մովսեսը ձեզ ի՞նչ պատվիրեց» (համար 3): Եվ իրե՛նք իսկ ցույց են տալիս իրենց անհավատարմությունը Մովսեսին՝ վկայակոչելով **թույլատրության** հանգամանքը. «Մովսեսը թույլ տվեց...» (համար 4): Նրանց պահանջած թույլատրությունը արտահայտված է Հին Կտակարանի Երկրորդումն օրինաց գրքում.

Եթե մեկը կին առնի և դառնա նրա ամուսինը, և եթե այնպես լինի, որ նա անարգ մի բան գտնի նրա վրա, և կինը հաճո չլինի իր աչքին, թող արձակման թուղթ գրի ու տա նրա ձեռքը և նրան արձակի իր տնից: (Երկրորդումն Օրինաց ԻԴ 1):

Ինչպես հաճախ, երբ հարցեր են ուղղում Հիսուսին հրեական ավանդույթների մասին, նա չի բավարարվում հաստատված պարագայական օրենքներով, այլ իր ունկընդիրներին ցույց է տալիս, թե ո՛րն է Արարչի կամքը: Նա նույն բանն արել էր նախապես շաբաթ օրվա կապակցությամբ (Մարկ. Բ 23—28): Այդպես էլ, ամուսնության և ամուսնալուծության վերաբերյալ, նա դիմում է արարչագործության պատմություններին Ծննդոց գրքում: Վեցերորդ օրը, երբ երկիրը լցվում է կենդանիներով, գրվածքն ասում է.

Աստված ստեղծեց մարդուն ըստ իր պատկերի,
Ըստ Աստծու պատկերի ստեղծեց նրան,
Արու և էգ ստեղծեց նրանց: (Ծննդոց Ա 27)

Ապա, քաջարվեստ մի գործողությունից հետո, որով Աստված քաշում-հանում է կնոջը տղամարդու կողից, վերջինս բացականչում է.

Սա այժմ ոսկր է իմ ոսկրից և մարմին՝ իմ մարմնից.
Սա կոչվելու է «կին»,
Քանզի իր մարդուց առնվեց սա:
(Ծննդոց Բ 23)

Եվ գրվածքը շարունակում է.

Դրա համար մարդը պիտի թողնի իր հորն ու մորը,
Պիտի գնա իր կնոջ ետևից,
Եվ երկուսը պիտի լինեն մեկ մարմին:
(Ծննդոց Բ 24)

Ստեղծագործական այս նպատակով է, որ Հիսուս դիմում է իր խոսակիցներին: Նա դիրք չի բռնում ո՛չ Հիլլելի և ո՛չ էլ Շամմայի կողմը, այլ ցույց է տալիս շատ ավելի խստապահանջ մի ճանապարհ՝ ամուսինների հիմնական միության ճանապարհը, որ փարիսեցիները մոռացել էին:

Մենակ մնալով Հիսուսի հետ՝ աշակերտները իրենց կարմանքն են արտահայտում նրա խոսքերի համար (համար 10): Հիսուս տարբեր բառերով նրանց կրկնում է այն, ինչ արդեն ասել է ուրիշներին (համար 11 և 12): Նա օրենքներ չի հաստատում, այլ նրանց առաջարկում է խորապես կրոնական մի վերաբերմունք, ըստ որի մարդը փորձում է հասու լինել Արարչի ծրագրերին: Դա անհրաժեշտ պայմաններից մեկն է Աստուծո Թագավորության:

60. ԼԻՆԵԼ ՄԱՆԿԱՆ ՊԵՍ (Մարկ. Ժ 13—16)

Ժ 13 **Եվ նրա մոտ մանուկներ էին բերում, որպեսզի ձեռքը դնի նրանց վրա: Իսկ աշակերտները հանդիմանում էին նրանց, ովքեր բերում էին:**

14 **Երբ Հիսուս այս տեսավ, բարկանալով սաստեց նրանց և ասաց. «Թույլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի՛ եղեք նրանց. որովհետև Աս-**

տուծո Թագավորությունը այդպիսիներին է:

15 **Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով Աստուծո Թագավորությունը չընդունի որպես մանուկ, նրա մեջ չի մտնի»:**

16 **Եվ նա նրանց վերցնելով իր գիրկը՝ նրանց վրա ձեռքը դրեց և օրհնեց նրանց:**

Մարկոսի ավետարանում երկրորդ անգամ է, որ Հիսուս ցույց է տալիս իր բարեսրտությունը մանուկների հանդեպ: Նախորդ անգամ նա իր անձն էր բերում որպես օրինակ՝ մանուկներին ընդունելու և տկարներին ծառայելու իր ձևով (Մարկ. Թ 33—37): Այժմ նրանց է բերում որպես այն բանի օրինակ, որ նրանց հոգիները բաց են Աստուծո Թագավորությանը: Այս հատվածի պատգամը տարբեր է:

Այն մարդիկ, որոնք մանուկներ են բերում Հիսուսին, ուզում են, որ նա դիպչի նրանց: Ինչո՞ւ այս ձգտումը: Մարմնական շփումը Հիսուսի հետ պարմանահրաշ բժշկումների նպատակով, արդեն բավմիցս նշվել է Մարկոսի ավետարանում (Մարկ. Ա 40—45 կամ Ե 21—43): Այստեղ, սակայն, ներկայացվող մանուկները հիվանդ չեն թվում: Ուրեմն հավանաբար հարցը վերաբերում է մի տեսակ նախապգուշական հպումի, պաշտպանական մի միջոցի, որպեսզի դժբախտությունները չհարվածեն նրանց:

Աշակերտները հակառակվում են ու չեն ցանկանում, որ նրանք հարաբերություն ունենան Հիսուսի հետ, առանց որ գրվածքը որևէ բան ասի նրանց հակառակության դրդապատճառների մասին: Չգիտենք նույնիսկ, թե նրանք ո՛ւմ են փորձում հեռացնել՝ երեխաների՞ն, թե՞ նրանց բերողներին: Համենայն դեպս գրվածքում նրանք որոշակիորեն ներկայացված են որպես ժողովրդի ծրագրերին և Հիսուսի մտադրությանը հակառակվողներ: Եկեղեցին հաճախ պատվար է հանդիսանում իր Տիրոջ և դրսից եկող աղքատների կամ փոքրիկների միջև:

Հիսուսի խոսքերը անսպասելի մի հանդիսավորություն ունեն այսպիսի մի դրվագի համար, որը, վերջին հաշվով, բավականին հասարակ է: Երկու անգամ նա գործածում է «Աստուծո Թագավորություն» արտահայտությունը, որը նրա քարոզության գլխավոր թեմաներից մեկն է (տես Մարկ. Ա 14—15):

Աստուծո Թագավորությունը նրանց համար է, ովքեր նման են այս մանուկներին, ասում է նա (համար 14): Եվ նա ավելի ուժգնություն է տալիս այս խոսքին՝ հայտնելով, որ ամեն մարդ պարտավոր է ընդունել այդ Թագավորությունը, ինչպես մանուկն է ընդունում այն (համար 15): Մանուկը այստեղ որոշակի կերպով հանդես է բերված որպես օրինակ, որին պետք է հետևել:

Կարող ենք հարց տալ մեզ, թե առաջին դարի մտայնությամբ, երբ փոքր տարիքի երեխաները որևէ արժեք չէին ներկայացնում հասարակության աչքին, մանկան մոտ ի՞նչն էր արժանի ընդօրինակվելու չափահասների կողմից: Նրա անմեղությո՞ւնը, թարմությո՞ւնը, կարմանալու ընդունակությո՞ւնը, նրա նոր և աննախապաշար հայացքը կյանքի վրա: Անկասկածելի քիչ այս բոլորը: Հարկավոր էր մանավանդ կգուշանալ մանկական հոգի ունենալու պատճառով մանկամիտ երևալու վտանգից:

Այն, ինչ Հիսուս որպես օրինակ ցույց է տալիս երեխաների մոտ, դա գուցե մանավանդ նրանց փոքրությունն է, նրանց աղքատությունը, այն նվաստ վիճակը, որ համարվում է անտեսվելու արժանի մի բան: Հիսուս ինքը արդեն երկու անգամ հայտնել է իր մոտալուտ նվաստացման մասին (Մարկ. Ը 31—33 և Թ 30—32): Նա հիանալի մի դաս է տվել իր աշակերտներին, որոնք շատ էին տարված առաջին լինելու ցանկությամբ (Մարկ. Թ 33—37): Որպես օրինակ բերելով մանուկներին, ցույց տալով իր սերն ու գորովը նրանց նկատմամբ և ձեռքը դնելով նրանց վրա (օրհնության սովորական մի ձև իսրայելացիների մոտ), նա հրավիրում է ամեն մարդու՝ ընտրելու ավելի շուտ խոնարհության և չքավորության, քան պատիվների ու մեծարանքների ճանապարհը:

(Շարունակելի)